Աջակցություն փախստական բուժաշխատողների ինտեգրմանը ՀՀ առողջապահության համակարգում*

2024 թվականի մարտ-հուլիս

Շուրջ 150 փախստական բուժաշխատողներ հզորացրել են իրենց գիտելիքները կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքների հիմնական սկզբունքների, ինչպես նաև բուժաշխատողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

2024 թվականի հուլիս-նոյեմբեր

Շուրջ 150 փաստական բուժաշխատողներ ներգրավվել են հոգեբանական աջակցության և պացիենտակենտրոն հաղորդակցության ու սոցիալական ինտեգրմանն ուղղված միջոցառումներում:

* Այս միջոցառումները հանդիսանում են Եվրոպայի խորհրդի՝ որպես Հայաստան փախստականների ներհոսքին արձագանքելու միջոցառումների համալիր փաթեթի բաղկացուցիչ մաս և նպատակ ունեն աջակցելու ՀՀ կառավարությանը՝ Ղարաբաղից բուժաշխատողների՝ ՀՀ առողջապահության համակարգում ինտեգրմանը:

Ծրագրի տեսա-վիդեո արդյունքներ

Օվիեդոյի կոնվենցիան պաշտպանում է առողջապահության և կենսաբժշկության ոլորտում մարդու իրավունքները (տեսահոլովակ)

Ինչու՞ է կարևոր ՀՀ-ի կողմից Եվրոպայի խորհրդի Օվիեդոյի կոնվենցիայի վավերացումը (տեսահոլովակ)

Տպագրություններ

- Օվիեդոյի կոնվենցիան և դրա Լրացուցիչ արձանագրությունները, 400 օրինակ
- Բուժաշխատողների էթիկայի կանոնները, 200 օրինակ
- Առողջապահական գրագիտության ձեռնարկ, 200 օրինակ
- «Մարդու իրավունքները կենսաբժշկության մեջ II» ծրագրի մասին բրոշյուր, 200 օրինակ
- Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի մասին բրոշյուր, 200 օրինակ
- «Մարդու իրավունքների և կենսաէթիկայի վերաբերյալ հանրային բանավեճի» ուղեցույց, 200 օրինակ
- «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության սահմանափակման վերաբերյալ ներպետական իրավական դաշտի և պրակտիկայի վերլուծություն. «Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ վճռի կատարում» զեկույց, հայերեն՝ 30, անգլերեն 5 օրինակ
- «Երեխաների մասնակցությունը իրենց առողջության վերաբերյալ որոշումների կայացմանը» ուղեցույց, 35 օրինակ
- «Արհեստական բանականության կիրառությունն առողջապահության ոլորտում և դրա ազդեցությունը, պացիենտ-բժիշկ փոխհարաբերությունների վրա», 50 օրինակ
- «Իրավունքահեն մոտեցումները առողջապահության ոլորտում», 100 օրինակ

Ծրագրի արդյունքները թվերով

32 կարողությունների զարգացման դասընթաց (92 օր)

8 փորձագիտական քննարկում, որից 2-ը՝ բարձրաստիճան

6 HELP առցանց դասընթաց 100 մասնակցի համար, և 88 հաջողությամբ ավարտած մասնակիցներ

2 մշակված զեկույց

Եվրոպայի խորհրդի շուրջ 10 թարգմանված փաստաթղթեր ու զեկույցներ

5 փորձի փոխանակման այց

Գործնական տեղեկատվություն՝

- Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների ու կենսաբժշկության բաժնի պաշտոնական կայքէջ՝ https://www.coe.int/en/web/bioethics/home
- Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի պաշտոնական կայքէջ՝ https://www.coe.int/hy/web/yerevan/

HYE

www.coe.int

Եվրոպայի խորհուրդը առաջատար իրավապաշտպան կազմակերպությունն է մայրցամաքում: Կազմակերպությանն անդամակցում է 46 պետություն, այդ թվում՝ Եվրոպական միության անդամ բոլոր պետությունները: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային, որը մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավունքի գերակայության պաշտպանությանը միտված միջազգային պայմանագիր է: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ II



COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Ծրագրի սկիզբը՝ **1 հունվարի 2023թ.**

Տևողությունը՝ **24 ամիս**

Ծրագրի բյուջեն: **900 000 եվրո**

Ֆինանսավորումը: **Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող 2023-2026 թթ. գործողությունների ծրագիր**

Հիմնական գործընկերներ: **ՀՀ Ազգային ժողով, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակ, ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտ:**

Ծրագրի արդյունքները

2024 թվականի մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին Օվիեդոյի կոնվենցիան:

Ազգային օրենսդրության համապատասխանեցում Օվիեդոյի կոնվենցիայով ամրագրված եվրոպական չափանիշներին



Աջակցություն ազգային օրենսդրության մշակմանը և բարելավմանը

- Լրամշակվել է «Բուժաշխատողների անհատական լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Լրամշակվել է «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, մշակվել են «Առողջության համապարփակ ապահովագրության մասին» ՀՀ օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր:
- Պատրաստվել և ՀՀ Ազգային ժողովին են տրամադրվել առաջարկություններ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի փոփոխությունների շրջանակներում:
- ՀՀ առողջապահության նախարարի թիվ 262-Ն հրամանով 2024 թվականի օգոստոսի 19-ին հաստատվել է «Բնակչության շրջանում օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման նշանակության, դոնորության նախապայմանների և փոխպատվաստմանն առնչվող այլ հարցերի շուրջ, ինչպես նաև որպես դիակային դոնոր հանդես գալու անհամաձայնության իրավունքի, դիակային դոնորի ընտանիքի անդամների համաձայնություն տալու իրավունքի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման» կարգը:
- Մշակվել են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքից բխող ենթաօրենսդրական ակտեր:

Աջակցություն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների Գործողությունների ծրագրին

- Մշակվել է բժշկական գաղտնիքի վերաբերյալ ձեռնարկ՝ Գործողությունների ծրագրի 5.5 կետի շրջանակներում:
- Մշակվել է անգործունակ ճանաչված անձանց՝ դատարանի մատչելիության իրավունքին առնչվող կարգավորումների վերաբերյալ նախագիծը՝ Գործողությունների ծրագրի 3.12 կետի շրջանակներում:

Աջակցություն ՀՀ-ի կողմից ՄԻԵԴ վճիռների կատարմանը

- «Մարդու իրավունքները կենսաբժշկության մեջ II» ծրագրի շրջանակներում պատրաստվել է ծավալուն զեկույց՝ «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց գործունակության սահմանափակման ազգային իրավական դաշտի և պրակտիկայի վերլուծություն. «Նիկոլայանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարումը» թեմայով: Զեկույցում ներկայացված են առաջարկություններ, որոնք վերաբերում են գործունակության պատշաճ գնահատմանը, գործունակության նպատակային սահմանափակումների ներդրմանը, գործունակության սահմանափակումների վերանայմանը, ինչպես նաև Հայաստանում խնամակալության և հոգաբարձության համակարգի կատարելագործմանը: Այն նաև նպաստում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «Նիկոլայանն ընդդեմ Հայաստանի» վճռի կատարմանը:

Աջակցություն բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի կայացմանը

- Էթիկայի հանձնաժողովը հաջողությամբ քննում է բուժաշխատողների էթիկայի կանոնների հնարավոր խախտումները:
- Մշակվել է Էթիկայի հանձնաժողովի իրավական և գործառութային շրջանակը և հաստատվել ՀՀ առողջապահության նախարարի հրամաններով:
- Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի անդամները հարստացրել են իրենց գիտելիքները էթիկայի հանձնաժողովների եվրոպական լավագույն փորձի ուսումնասիրության միջոցով:
- Եվրոպայի խորհրդի աջակցությամբ Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի անդամները մասնակցել են Ազգային էթիկական հանձնաժողովների եվրոպական ցանցի 31-րդ, 32-րդ և 33-րդ հանդիպումներին:
- Մշակվել է Բուժաշխատողների էթիկայի հանձնաժողովի կայքէջը՝ առցանց դիմելու հնարավորությամբ (www.mec.am):

Նոր HELP դասընթացի մշակում

HELP
Human Rights Education for Legal Professionals

Մշակվել է «Մարդու իրավունքները հոգեկան առողջության ծառայությունների ոլորտում» նոր HELP դասընթացը, որը մեծ կարևորություն ունի ոչ միայն Հայաստանի, այլ նաև Եվրոպայի խորհրդի մյուս անդամ-պետությունների համար:

Կարողությունների զարգացման դասընթացներ առողջապահության ոլորտի մասնագետների և իրավաբանների համար

Նպաստել են Օվիեդոյի կոնվենցիայով և դրա Լրացուցիչ արձանագրություններով ամրագրված սկզբունքների գործնական կիրառմանը:

Հզորացրել են մասնակիցների կարողությունները առողջապահության ոլորտում հանրային խոսքի և բանավեճի վերաբերյալ՝ խթանելու համար ոլորտային քաղաքականության վերաբերյալ քննարկումները:

Հարստացրել են մասնակիցների գիտելիքները բուժաշխատողների էթիկայի կանոնների և էթիկայի հանձնաժողովների գործունեության վերաբերյալ:

- ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի ու առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովների անդամները և աշխատակազմը
- Առողջապահության նախարարության 60 խորհրդատուներ
- ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտի 25 աշխատակիցներ
- Հետազոտությունների էթիկայի հանձնաժողովի անդամներ
- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմը և ոլորտի փորձագետները
- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի 25 աշխատակիցներ
- ԵՊԲՀ 45 բուժաշխատողներ
- ԵՊԲՀ համալսարանական հիվանդանոցների 35 բուժաշխատողներ
- Կենսաբժշկության հիմնական սկզբունքների վերաբերյալ 6 HELP առցանց դասընթացների 100 մասնակիցներ

Առողջապահական հարցերի շուրջ հանրային երկխոսությունը բարելավվել է

- «Մարդու իրավունքների և կենսաէթիկայի վերաբերյալ հանրային բանավեճի» ուղեցույցը թարգմանվել և քննարկվել է ազգային գործընկերների ու բուժաշխատողների հետ:
- «Առողջապահական գրագիտության ուղեցույցը» թարգմանվել է և տրամադրվել ազգային գործընկերներին:
- Հոգեկան առողջության ծառայությունների ոլորտում մարդու իրավունքների վերաբերյալ փորձագիտական քննարկումը խթանել է քննարկումները տարբեր շահագրգիռ կողմերի միջև:
- «Իրավունքահեն մոտեցումներն առողջապահության ոլորտում» փորձագիտական քննարկումը նշանավորել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 75-րդ ամյակը և սահմանել առողջապահության ոլորտում կիրառելի մարդու իրավունքների շրջանակը:
- Եվրոպայի խորհրդի Օվիեդոյի կոնվենցիայի հիմնական սկզբունքների շուրջ հանրային բանավեճը խթանել է կոնվենցիայի վերաբերյալ քննարկումներն ու երկխոսությունը շահագրգիռ կողմերի և լայն հանրության միջև:
- Հոգեկան առողջության խնդիրների հետևանքով անգործունակ ճանաչված անձանց իրավունքների վերաբերյալ քննարկումը արդյունավետ հարթակ է դարձել պետական և ոչ պետական կառույցների միջև քննարկման և կարծիքների փոխանակման համար և նպաստել «Նիկոլայանն ընդդեմ Հայաստանի» գործով ՄԻԵԴ վճռի կատարմանը:
- Առանցքային քննարկումը դարձել է հարթակ ՀՀ Ազգային ժողովի, Առողջապահության նախարարության և Եվրոպայի խորհրդի փորձագետների միջև՝ քննարկելու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների, վաղ ամուսնությունների էթիկական և մարդու իրավունքների ասպեկտները:
- Համատեղ քննարկումը անդրադարձել է Կառավարության կողմից՝ առողջապահության ոլորտում իրականացվող բարեփոխումների օրակարգի շրջանակում առողջության պահպանման իրավունքի լիարժեք պաշտպանությանը:
- Համատեղ միջոցառմանը քննարկվել են երեխաներին՝ իրենց առողջության վերաբերյալ որոշումներին մասնակցությունը խթանելու հնարավորությունները:

Փորձի փոխանակման այցեր

Միջոցառումներ լրագրողների և առողջապահության ոլորտի քաղաքացիական հասարակության մասնակցությամբ

Ամրապնդել են գիտելիքներն ու հմտությունները Բուժաշխատողների էթիկայի կանոնների և էթիկայի հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Ընդլայնել են իրենց գիտելիքները բուժաշխատողների էթիկայի կանոններին էթիկայի հանձնաժողովի գործունեության վերաբերյալ:

Ամրապնդել են մարդու իրավունքների և կենսաբժշկության ոլորտում եվրոպական չափանիշների վերաբերյալ իրենց կարողությունները և հմտությունները: